ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03»

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.02.2021թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 11.02.2021թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Խնդրում եմ տալ պարզաբանում «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հայտի վերաբերյալ առաջացած ներքոնշյալ հարցի վերաբերյալ՝

1.Նշել եք, որ Ձեզ հարկավոր է A4 ձևաչափի թուղթ հետևյալ պարամետրերով՝

A4 ձևաչափի, չկավճած, մեխանիկական եղանակով ստացված, խտությունը՝ ոչ պակաս 80գ/մ2, սպիտակությունը՝ 168% և ավելի (CIE համակարգով): Հաստությունը՝ 110 մկմ (+,- 3 մկմ), անթափանցելիությունը՝ ոչ պակաս 93% , տուփերով՝ յուրաքանչյուր տուփում 500 թերթ: ISO 14001 և ISO 9706 ստանդարտներին համապատասխան:

1. Խնդրում եմ պարզաբանել. Ինչո՞վ է պայմանավորված A4 ձևաչափի թղթի սպիտակությունը 168% CIE և ավելի, անթափանցելիությունը՝ ոչ պակաս 93% պայմանը: Փաստեմ որ A կարգի A+ դասի A4 ձևաչափի թղթի սպիտակությունը սկսվում է 165CIE-ից, անթափանցելիությունը՝ 92%-ից, որը տեսանելի հատկանիշներով չի տարբերվում Ձեզ անհրաժեշտ պարամետրերով թղթից և ոչ մի կերպ չի ազդում թղթի պահպանման ժամկետի ու տպիչ սարքերի աշխատանքի վրա: Հետևաբար խնդրում եմ փոփոխել պահանջվող պարամետրերը, ինչը հնարավորության կտա ..... ՍՊ Ընկերությանը ևս մասնակցելու Ձեր կողմից հայտարավարծ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով մրցույթին:»

Պարզաբանում

«Պետական գնման գործընթացի կազմակերպման բոլոր դեպքերում Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, որին համապատասխան սահմանվում են գնման առարկայի բնութագրերը: Տվյալ դեպքում Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված է գնվելիք ապրանքի այնպիսի չափորոշիչներով տեխնիկական բնութագիր, որը համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը՝ հաշվի առնելով նաև, որ այդ բնութագրին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787:**

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru:**

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: